



Բաղեն-Վյուրթեմբերգի Հայ Համայնք  
Armenische Gemeinde Baden-Württemberg e.V.

AGBW | Postfach 126 | D-73001 Göppingen

Anerkannter Träger  
der freien Jugendhilfe i. S.  
des § 75 SGB VIII des KJHG

Amtsgericht Göppingen  
Registergericht Nr. 659

Finanzamt Göppingen Ü.L.  
Nr.: 58/63089/05313

**ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

**Մշակույթների հաջողված երկխոսություն:  
Շտուտգարտում կայացան 8-րդ Հայ Մշակույթի Օրերը**

Հոկտեմբերի 25 - 28ը Գերմանիայի Բաղեն-Վյուրթեմբերգ Երկրամասի հայ համայնքի և նրա հոգևոր հովիվ՝ արժանապատվ Ս. Տիրատուր քին. Սարդարյանի նախաձեռնությամբ Շտուտգարտում անցկացվեցին «Հայ Մշակույթի Օրեր», որոնց այս տարվա խորագիրն էր «Շնորհակալ եղեք ամեն ինչում»:

Բազմաշերտ ծրագրերն ընդգրկում էր հոգևոր, դասական և ջազային համերգներ, գրքերի շնորհանդեսներ, ֆիլմերի ցուցադրում, երեխաների համար ծրագրեր: Մշակույթի Օրերի մասնակիցները ծանոթացան հայ խոհանոցի խոհարարական հրաշքներին, համտեսեցին հայաստանում արտադրված գինիներ ու ծանոթացան Հայաստանին որպես զբոսաշրջային երկրի:

Ծրագիրն այսպիսով հնարավորություն է տալիս սփյուռքի հայ համայնքի համախմբմանը, ամրապնդմանը, ինչպես նաև նպաստում է Հայաստանի ճանաչելիության մակարդակի աճին, հայկական մշակույթի, ավանդույթների, զբոսաշրջային ներուժի բացահայտմանը: Զանազան ոլորտներում, առօրյայից մինչև բարձր արվեստ, հնարավորություններ ստեղծվեցին բազմաշերտ շփումների ու փոխանակման:

Այս տարվա Շտուտգարտի Հայ Մշակույթի Օրերը բացվեցին պոլսահայ երաժիշտներ՝ Արթուր Բաղդասարյանի (բարիտոն) և Եղվին սրկ.Ղալիպյանի (երգեհոն) համերգով, որի ընթացքին հնչեցին հայ և միջազգային հոգևոր երաժշտության գոհարներ:

Հայ հոգևոր երաժշտությունը ներկայացված էր «Մաղմուսերգու» արական երգչախմբի կողմից: Բացառիկ գեղեցկությամբ ու բանիմացությամբ Կոմիտասյան հոգևոր խմբերգերն ու խմբավար Վահե Բեգոյանի կողմից մշակված շարականները, կատարյալ կերպով ներկայացվեցին խմբի ու մենակատար Վահագն Հովենցի կողմից, հիացնելով ներկաներին: Մաղմուսերգուի փայլուն կատարումը, մաքրամաքուր ձայներն ու փոխանցված հոգևոր մթնոլորտը բարձր գնահատանքի արժանացավ

**Datum: 01.11.2018**  
**Aktenzeichen: AKTS 2018**

**Post:**  
Armenische Gemeinde BW  
Postfach 126, D-73001 Göppingen  
Tel.: +49 (0) 7161 8084717  
Fax: +49 (0) 7161 8084709  
www.agbw.org  
www.armenische-kulturtage-stuttgart.de

**Gemeindepfarrer:**  
Pfr. Dr. Diradur Sardaryan  
Email: gemeindepfarrer@agbw.org

**Gemeindevorstand:**  
Berc Takesian  
Email: vorstand@agbw.org

**Bankverbindung:**  
Kreissparkasse Göppingen  
IBAN: DE1161050000001234026  
BIC-/SWIFT: GOPSDE6GXXX

**Spendenkonto:**  
Kreissparkasse Göppingen  
IBAN: DE2261050000049033973  
BIC-/SWIFT: GOPSDE6GXXX

**DIÖZESE DER ARMENISCHEN KIRCHE**

Allensteinerstr.5, D-50735. Köln  
Tel.: +49 (0) 221 7126223  
Fax.: +49 (0) 221 7126267  
E-Mail: info@armenische-kirche.de  
www.armenische-kirche.de

ունկնդրի կողմից, որն արտահայտվեց հոտնկայս ծափահարություններով:

Հոկտեմբերի 26-ին մասնակիցները ծանոթացան հայոց հազարամյա պատմություն ունեցող և տարածաշրջանում լայն տարածված խոհանոցին: Յուլիա Նիկողոսյանը (գրքի թարգմանչուհին) ներկայացրեց Մուսաննա Սարգսյանի «Խոհարարական ճամբորդություն դեպի Հայաստան» գիրքը, իսկ «Արենի Փառատոն» հիմնադրամի կողմից ներկայացվեց Հայաստանում խաղողագործությունը, գինեգործությունը, իրադարձային զբոսաշրջության ողջ ներուժը: Կազմակերպվեց գինու և հայկական ուտեստների համտեսում:

Մշակույթի Օրերիը ընթացքում Մարկ Դեգենսի «Երևան» գրքի շնորհանդեսի, ինչպես նաև «Սոնա Վարպետյան և ընկերներ» խմբի աննկարագրելի ջերմ համերգով, նշվեց քաղաքամայր Երևանի 2800 ամյակը: «Երևան» գիրքը ներկայացնում էր Հայաստանում ու Երևանում շուրջ 3 տարի բնակվող գերմանացի գրող և հրատակարիչ Մարկ Դեգենսի անձնական տպավորությունները: Իսկ Սոնա Վարպետյանն ու իր ընկերները հանդիսատեսին նվիրեցին անմոռանալի հուշեր, կատարվեցին հին Երևանյան ինչպես նաև Երևանում սիրված գեղեցիկ ստեղծագործություններ:

Հանդիսատեսի հետաքրքրությանն ու բարձր գնահատանքին արժանացան Ավետիս Հաճեանի «Գաղտնի Ազգ, Թուրքիայի գաղտնի հայերը», որում նա նկարագրում է իր ճամփորդությունները դեպի նախկին Արևմտյան Հայաստան, իր այցելություններ Սասուն, Վան, Հաճն, Այթապ, Մարաշ, Ուրֆա, Տիգրանակերտ, որտեղ նա փորձում էր գտնել ցեղասպանությունը վերապրած հայերի իսլամացած ժառանգներին:

Շտուտգարտի Հայ Մշակույթի հյուրերից էր «Աշխարհների սահմանագծին» վավերագրական ֆիլմի հեղինակ Տիգրան Պասկեվիչյանը: Ֆիլմը, որը ներկայացնում է 2-րդ աշխարհամարտի հայ ռազմագերիների եւ տեղահանված անձանց ճակատագիրը մեծ հետաքրքրություն էր առաջացրել գերմանացի հանդիսատեսի մոտ: Ֆիլմը պատմում էր մարդկանց մասին, որոնք անցնելով պատերազմի, գերության, հարկադրանքի եւ ստրկության ճամփաներով՝ դժվարին ընտրություն պիտի կատարեին Հայրենիքի եւ ազատության միջեւ: Հատկանշական էր, որ ֆիլմի գերմանական պրեմիերան կայացավ Շտուտգարտում, ուր և գտնվում էր հայերի ճամբարը՝ «Ֆունկերկազերնե»-ն: Ֆիլմի ցուցադրումից հետո տեղի հանդիսատեսը առիթ ունեցավ հարցեր ուղղելու հեղինակին:

Մեծ հետաքրքրություն էր առաջացրել հանդիսատեսի մոտ նաև Թորսթեն Ֆլայգի հեղինակած «Հայաստան» գիրք-ուղեցույցի շնորհանդեսը: Գիրքն առանձնահատուկ է նրանով, որ Հայաստանի մասին համապարփակ, ծավալուն ինֆորմացիա է հաղորդում թե՛ զբոսաշրջիկների, թե՛ տեղացիների համար, գերմաներեն լեզվով:

Հայ Մշակույթի Օրերիը ավարտվեցին հոկտեմբերի 28-ին ավանդական դարձած գալստիաներով: Հայլբրոնի Վյուրթեմբերգյան Կամերային Նվագախումբը իր նախկին դիրիժոր Ռուբեն Գազարյանի ղեկավարության ներքո հանդես եկան թավջութակահար Սուրեն

Բագրատունու և ջութակահար Էմանուել Ճգնավորյան հետ:  
Կատարվեցին Օտտորինո Ռեսպիգիի «Antiche danze ed arie: Suite III»,  
Յոզեֆ Հայդենի «Համերգ թավջութակի և նվագախմբի համար»-ը, Լորիս  
Ճգնավորյանի «Համերգ ջութակի և նվագախմբի համար», Իսահակ  
Ալբենի «Cantons de Espana» ստեղծագործությունները:

Համերգին ներկա էր գտնվում մատուցող Լորիս Ճգնավորյանը, ինչպես մի  
շարք քաղաքական և պետական գործիչներ, հոգևորականներ,  
բարեգործական կազմակերպությունների ներկայացուցիչներ: Համերգի  
ավարտին Մատուցող Ռուբեն Ղազարյանը ՀՀ Դեսպան Աշոտ Սմբատյանի  
կողմից պարգևատրվեց ՀՀ Մշակույթի Նախարարության ոսկե մեդալով:

Աննկարագրելի զգացմունքներ, գեղեցիկ ու բարձրորակ երաժշտության,  
տաղանդաշատ ու անթերի կատարողների այս հանդեսը  
համապատասխան տոնական ավարտն էր Շտուտգարտի 8-րդ Հայ  
Մշակույթի Օրերի: Հիասքանչ մի տոն, մշակույթների հաջողված  
երկխոսություն:

Բաղեն-Վյուրթեմբերգի Հայ Համայնք

*Նկարների հեղինակներ՝ Արմեն Անանյան, Թոմաս Շաուց*